ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 39-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՂԱԹ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի 39-րդ տարեդարձի ուրախալի առիթով ճանեցեք ընդունել, Մեծարգո Նախագահ, Մեր սրտագին շնորհավորանքները և բարեմաղթությունները: Աղոթում ենք Աստծուն մեր սիրելի Հայրենիքի շինության և վերելքի համար, մեր ժողովրդի բարօրության ու խաղաղության համար, Սովետական մեծ Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Ողջունիվ և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սրտագինս ողջունում և շնորհավորում ենք Ձեզ և մեր Հայրենիքի բարեխնամ կառավարությանը Սովետական Հայաստանի 39-րդ տարեդարձի առիթով: Մաղթում ենք մեր սիրեցյալ ժողովրդին և նրա անխոնջ ղեկավարներին խաղաղ տարիներ՝ հաջողությամբ իրագործելու մեր Հայրենիքի շինության ու հետագա վերելքի փայլուն ծրագրերը:

Թո՛ղ հավետ ծաղկի և շեն մնա ամբողջ հայության լուսատու փարոս մեր սիրելի Սովետական Հայաստանը:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի 39-րդ տարեդարձի առիթով հաճեցեք ընդունել Մեր ջերմ շնորհավորանքները և բարեմաղթությունները:

Թո՛ղ Տերը միշտ հաստատ և անսասան պահի մեր պայծառ Հայրենիքը և խաղաղություն ու բարգավաճություն պարգևի մեր սիրելի և հարազատ ժողովրդին:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից հայտնում եմ շնորհակալություններ Հայաստանում Սովետական կարգեր հաստատելու 39-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած շնորհավորանքների համար:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Հայաստանի կառավարության և իմ շնորհակալությունը Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 39-րդ տարեդարձի առթիվ Ձեր կողմից հղված շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ Միհիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և իմ անունից խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, Սովետական Հայաստանի 39-րդ տարեդարձի առթիվ Ձեր կողմից հղված շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ